# ՓՈԽԱԿԵՐՊԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Փիլիսոփ. գիտ. դոկտոր Ռ. Ջ. ՋԻՋՅԱՆ

*Փոխակերպական տրամաբանությունը համառոտ կերպով կարելի է բնութագրել որպես տրամաբանական գիտություն մտքի ոչ-բացահայտ ձևերի և կառուցվածքների մասին, որոնք ենթադրվում են մտքի ձևերի ու կառուցվածքների լեզվական բացահայտ ձևակերպումներում։ Փոխակերպական տրամաբանության ընդհանուր գաղափարը, նրա տեսական համակարգի ուրվագիծը և կոնկրետ խնդիրների լուծումները առաջինը մշակել է ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը*[1]։ *Առաջարկված տեսության առանցքը կազմում են մտքի բացահայտ և ոչ-բացահայտ ձևերի փոխհարաբերությունների վերլուծությունը, որի արդյունքով ձևակերպվում են ընդհանրացնող փոխակերպական կանոնները։ Փոխակերպական վերլուծությունը, ոչ-բացահայտ ձևերի բխեցումն ու ճշգրտումը կատարվում է համապատասխան ենթատեքստի և համատեքստի հիման վրա։ «Փոխակերպական տրամաբանությունը,— սահմանում է Գ. Ա. Բրուտյանը,— գիտություն է, որն ուսումնասիրում է մտքի բացահայտ ձևերի ու կառույցների միջև տարբերությունը, մտքի ենթատեքստային ու համատեքստային ձևերի ու կառույցների էությունը, մտքի բացահայտ ձևերից ու կառույցներից ոչ-բացահայտ ձևեր ու կառույցներ սերելու եղանակները, հնարները, փոխակերպական կանոնները»*[2]։ *Փոխակերպական տրամաբանության «հումքը» մտքի բացահայտ ձևերն են, որոնցից էլ բխեցվում են, «կառուցվում» ոչ-բացահայտ ձևերը։ Եվ քանի որ վերջիններս ձևական տրամաբանության ուսումնասիրության առարկան են, ապա այն հանդես է գալիս որպես փոխակերպական տրամաբանության ստեղծման անհրաժեշտ նախադրյալ։ Ինչպես ընդգծում է Գ. Ա. Բրուտյանը, մտքի ոչ-բացահայտ ձևերը կարելի է հայտնաբերել տրամաբանական ցանկացած կատեգորիայի ոլորտում, և այդ առումով փոխակերպական վերլուծության նպատակն է ճշգրիտ և միանշանակ ձևով բացահայտել այն բոլորը, ինչ որ բացահայտ ձևով ենթադրվում է մտքի ձևերի՝ հասկացությունների, դատողությունների, մտահանգումների մասին տրամաբանական ուսմունքներում։*

*Հաշվի առնելով այդ հանգամանքը, պետք է նշել, որ փոխակերպական տրամաբանության տարրերը, փոխակերպական վերլուծությունը առկա են արդեն ձևական տրամաբանության շրջանակներում, նույնիսկ նրա սկզբնավորման շրջանում, բոլոր այն դեպքերում, երբ մեկնաբանվում ու ճշգրտվում են մտքի ձևերին, նրանց օրենքներին ու կանոններին վերաբերող խրթին ու*

---

[1] *Տե՛ս Գ. Ա. Բրուտյանի հետևյալ աշխատությունները.* Трансформационная логика. Ереван, 1983. Трансформационная логика.—Вестник общественных наук АН АрмССР, 1981, № 11, с. 14—29. Трансформационная логика: общая характеристика и основные понятия.—Вопросы философии, 1983, № 8, с. 95—106. *Տրամաբանության դասընթաց, լրջորդ հրատ., Երևան, 1987, էջ 398—406։* Transformational logic -- Formal Approaches to Natural Language. Tokyo, March, 1982, pp. x—1—x—8. Logique transformationalle. XVII World Congress of Philosophy. Summaries. Montreal 21—27/8, 1983. Transformational Logic: Essential Nature and Basic Concepts. Soviet Studies in Philosophy, 1984, vol. 22, N 3, p. 3—22.

[2] Г. А. Брутян. Трансформационная логика, с. 66.

դժվարին հարցերը։ Եվ քանի որ մեծ մտածող Դավիթ Անհաղթի դիտական ժառանգությունում կարևոր տեղ են դրավում Արիստոտելի տրամաբանական աշխատությունների մեկնությունները, ապա միանգամայն հասկանալի է այն փաստը, որ Դավթի երկերը հարուստ են փոխակերպական տրամաբանության հարցադրումներով, արժեքավոր ու հետաքրքիր լուծումներով։

Դավթի մոտ, ինչպես և փոխակերպական տրամաբանությունում ընդհանրապես, մտածողության ձևերի ու կանոնների ճշգրտումները, կնճռոտ հարցերի պարզաբանումները, ոչ-բացահայտ հանգամանքների բացահայտումը իրականանում են ենթատեքստի (տվյալ տեքստում ոչ-բացահայտ ձևով ենթադրվող ու տեքստի մեկնիչի կողմից բացահայտվող ինֆորմացիայի) և համատեքստի (տվյալ մտքի այն ինֆորմացիոն շրջապատի, որը հնարավորություն է տալիս հասնել այդ մտքի բովանդակության ու ձևի ճշգրտմանը) միջոցով։

Ենթատեքստը և համատեքստը հաշվի առնելու անհրաժեշտությունը ձևական տրամաբանությունում իր արտացոլումն է գտել նույնության օրենքի այն պահանջում, ըստ որի տվյալ կշռադատության ընթացքում յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր հասկացություն պետք է օգտագործել միևնույն իմաստով։ Ելնելով փաստարկման, բանավեճի պրակտիկայի արդյունավետության նպատակներից, Դավիթ Անհաղթը կոնկրետացնում է նույնության օրենքի պահանջը և առաջարկում նրա իրականացման երեք քայլ։ Առաջին՝ պարզել քննարկման առարկա հանդիսացող հասկացության բոլոր իմաստները, նշանակությունները։ Երկրորդ՝ ճշտել, թե այդ իմաստներից որի մասին է խոսքը տվյալ քննարկման շրջանակներում։ Եվ երրորդ՝ տալ քննարկվող հասկացության այդ իմաստի սահմանումը կամ նկարագրությունը։ Դավիթ Անհաղթը գրում է. «Քանզի որոշումն է տրամաբանական, որ ասէ, թէ պարտ է ի վերայ հոմանուանցն զերիսս զայսոսիկ խնդրել, եթէ քանիս ունի նշանակութիւնս հոմանունն. և եթէ յաղագս որո՞յ նշանակութեան է բանն. և երրորդ ապա ստորագրել և կամ սահմանել զմի ի նշանակութեանցն, յաղագս որոյ բանն է»[3]։ Դավիթ Անհաղթի նշված կանոնը փաստորեն ենթատեքստի և համատեքստի միջոցով հասկացության բովանդակության ճշգրտման մի արդյունավետ ուղեցույց է։

Իր կանոնը Դավիթը պարզաբանում է տարբեր հասկացությունների, օրինակ, «գոյ» կատեգորիայի բովանդակության ճշգրտման եղանակը ցուցադրելու միջոցով. «Արդ այսպէս և ի վերայ էին զերիսս զայսոսիկ խնդրեմք։ Քանզի խնդրեմք նախ առաջին, թէ որչափ նշանակութիւնս ունի. և ասեմք, թէ ըստ տասն նշանակեցելոցն են բերի, այսինքն ըստ տասն ստորոգութեանց։ Եւ երկրորդ խնդրեմք, թէ յաղագս որոյ նշանակեցելոյ է բանն, այսինքն յաղագս գոյացութեա՞ն, թէ յաղագս քանակի՞, թէ յաղագս որակի՞, թէ յաղագս այլո՞ցն. և երրորդ, զնշանակեցեալն ընդ սահմանաւ և կամ ընդ ստորագրութեամբ արկանեմք» (էջ 32)։

Հասկացությունների, բառերի իմաստի, նշանակության ճշգրտումը որպես ցանկացած պրոբլեմի լուծման նախապայման Դավիթ Անհաղթը իրավամբ անվանում է «արիստոտելյան սովորույթ»։ Բանը միայն այն չէ, որ նույնության օրենքը ձևակերպել է Արիստոտելը. «Յուրաքանչյուր բառ պետք է հասկանալի լինի և որևէ բան նշանակի, ընդ որում ոչ թե մի քանի, այլ միայն մի բան. իսկ եթե նա ունի մի քանի նշանակություն, ապա պետք է պարզել նրանցից որն է օգտագործվում»[4]։ Հիշատակելով «արիստոտելյան սովորույթը», Դավիթ Անհաղթը տվյալ դեպքում ելնում է այն հանգամանքից, որ ցանկացած պրոբլեմ լուծելուց առաջ Արիստոտելը, որպես կանոն, նախօրոք քննարկում է համապատասխան հասկացությունների հայտնի նը-

[3] Դաւիթ Անյաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք (համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի). Երևան, 1980, էջ 32 (այսուհետև էջերը կընշվեն տողամիջում)։

[4] Аристотель. Метафизика. XI, 5, 1062 a 14.

շանակությունները և առանձնացնում այն նշանակությունը, որը, հաճախ ոչ-բացահայտ ձևով, ենթադրվում է տվյալ կոնկրետ պրոբլեմի շրջանակներում։ Այսպես, «Մետաֆիզիկայի» 5-րդ գրքում նախօրոք պարզվում են «պատճառ» կատեգորիայի չորս, «նախասկիզբ» հասկացության վեց, «բնույթ» հասկացության վեց, «անհրաժեշտության» երեք, «գոյի» չորս, «էության» չորս, և մոտ 20 այլ հիմնային փիլիսոփայական հասկացությունների իմաստները։

Դավիթ Անհաղթը մեծ հմտություն և վարպետություն է ցուցաբերում տրամաբանական կնճռոտ հարցերը ենթատեքստի ու համատեքստի միջոցով լուծելիս։ Քննարկելով կոնյունկցիա տրամաբանական շաղկապի բնույթին վերաբերող այն դրույթը, որ ոչ բոլոր միասնաբար անուն ստացած բաները կարող են (միասնաբար) կրել այն անվանումը, որ ստացել են առանձին-առանձին, Դավիթ Անհաղթը դիմում է հետևյալ օրինակին. եթե տրված են «Սիմոնը կոշկակար է» և «Սիմոնը լավն է» նախադրյալները, ապա նրանցից ընդհանուր դեպքում չի բխում անհրաժեշտաբար «Սիմոնը լավ կոշկակար է» եզրակացությունը։ Ընթերցողին համոզելու համար Դավիթն առաջարկում է հարցը քննել այնպիսի մի իրավիճակում, համատեքստում, երբ հիշյալ Սիմոնը բնավորությամբ լավն է, իսկ արհեստով՝ վատ (էջ 79)։ Դավիթ Անհաղթի այս օրինակը հավանաբար սկիզբ է առել Արիստոտելի «Սոփեստական հերքումների մասին» աշխատության հետևյալ հարցադրումից. «Կարո՞ղ է արդյոք լավ կաշեգործը լինել վատ»։ (Ոչ)։ Բայց ինչ-որ մեկը, լինելով լավ կաշեգործ, կարող է լինել վատ (մարդ)»[5]։

Կոնյունկցիա շաղկապի բնույթի բացահայտմանը նվիրված Դավիթ Անհաղթի հարցադրումը դարեր անց ձևավորվեց «մտահանգում սահմանափակումով» պրոբլեմի ձևով[6]։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ «Ա-ն Բ է, ԳԱ-ն նույնպես ԳԲ է» կառուցվածքը ունեցող մտահանգման այդ եղանակը օրինական է միայն այն դեպքում, երբ նախօրոք Գ հասկացությունը ճշգրտվում է այնպես, որ այն արտահայտի որոշակի միանշանակ հատկություն, ընդ որում և՛ Ա-ն և՛ Բ-ն պետք է օժտված լինեն այդ Գ հատկությամբ[7]։

Փոխակերպական վերլուծությամբ առանձնապես հագեցված է արիստոտելյան «Անալիտիկաների» Դավթի մեկնությունը։ Գիտության պատմության մեջ Արիստոտելի «Անալիտիկաները» բացառիկ տեղ են գրավում։ Այստեղ առաջին անգամ գիտական ուսմունքը ներկայացվեց տեսական (աքսիոմատիկ) համակարգի տեսքով, որտեղ բոլոր հարցերը ստանում են խիստ ապացուցողական լուծում ելակետային սկզբունքների ու միանշանակ սահմանումների հիման վրա։ Սակայն միայն դա չէ, որ դարեր շարունակ դրդել է հետազոտողներին ուսումնասիրել ու մեկնել արիստոտելյան հիմնարար երկը։ («Անալիտիկաներին» նվիրված վերջին մենագրություններից մեկի հեղինակը՝ լեհ տրամաբան Յան Լուկասևիչը համոզված էր, որ միայն իրեն է հաջողվել ճիշտ հասկանալ արիստոտելյան սիլլոգիստիկայի իրական բնույթը[8])։ «Անալիտիկաների» լեզուն արտակարգ սեղմ է նույնիսկ Արիստոտելի այլ աշխատությունների համեմատությամբ, իսկ կշռադատություններն ու ապացույցներն այնքան համառոտ և կրճատ, որ նրանք իրոք մեկնության անհրաժեշտ պահանջ են առաջացնում։

Անդրադառնալով մեկնության պրոբլեմին, Դավիթ Անհաղթը նշում է մտքերի անպարզության երկու հիմնական աղբյուր՝ երկի լեզվի պատճառով (անհաջող շարադրանք կամ բարդ, անսովոր, բազմիմաստ հասկացությունների գործադրում) և ներկայացված տեսության, ուսմունքի բարդության

---

5 Аристотель. О софистических опровержениях, 177 b 13.

6 Տե՛ս В. Минто. Индуктивная и дедуктивная логика. СПб., 1902, с. 107.

7 Տե՛ս Р. З. Джиджян. Расширенная силлогистика. Ереван, 1977, с. 94—100.

8 Տե՛ս Я. Лукасевич. Аристотелевская силлогистика с точки зрения современной формальной логики. М., 1959, с. 11.

պատճառով (էջ 121)։ Քննարկվող հարցի կապակցությամբ հետաքրքիր և ուսանելի է Դավիթ Անհաղթի դիտողությունը Արիստոտելի ու Պլատոնի երկերի գաղափարների և ոճի վերաբերյալ։ Արիստոտելյան տեսությունները դյուրին են, բայց շարադրման ոճը՝ խրթին, որովհետև, բացատրում է Դավիթը, եթե որևէ մեկը գիտե, թե ինչ է ներավարտ ունակությունը (էնտելեխիան), քանակը և զորությունը, նրա համար Արիստոտելի դրույթները հեշտ ու դյուրին են, բայց շարադրման ոճը՝ դժվարին։ Իսկ պլատոնյան տեսությունները ըստ ամենայնի խրթին ու դժվարին են, իսկ շարադրման ոճը՝ դյուրին և ճոխ։ Այդ է պատճառը, որ ամեն մի մեկնիչ նրան յուրովի է հասկանում (էջ 122)։

Այնուամենայնիվ, արիստոտելյան «Անալիտիկաների» Դավիթ Անհաղթի առավել կարևոր ու արժեքավոր մեկնությունները պայմանավորված են ոչ թե շարադրանքի անպարզությամբ, այլ բուն սիլլոգիստիկայի տեսության պարզաբանման պահանջներով։

Այսպես, «Առաջին անալիտիկայի» II գլխում դատողությունները բաժանվում են ընդհանուր, մասնավոր և անորոշ դատողությունների։ Դավիթը հարց է բարձրացնում. ինչո՞ւ Արիստոտելը չի հիշատակում եզակի դատողությունները, մի հարց, որը պատասխան է պահանջում նաև տրամաբանության այսօրվա ձեռնարկների հեղինակներից, քանի որ գրեթե բոլոր ժամանակակից դասագրքերում, ընդհանուր և մասնավոր դատողությունների կողքին նշում են նաև եզակի դատողությունները։ Դավիթը հետևյալ բացատրությունն է առաջարկում. Արիստոտելը չի հիշատակել եզակիների մասին, քանի որ եզակիների մասին եղած դատողությունները հենց անորոշներն են (էջ 316)։ Բացատրությունն առաջին հայացքից սպառիչ է. քանի որ անորոշ դատողությունը սահմանվում է որպես դատողություն, որը չի պարունակում «բոլոր», «որոշ» և նրանց համարժեք քվանտորային արտահայտություններ, ապա եզակի դատողությունները «սկզբունքորեն» անորոշ են, որովհետև եզակի հասկացությունները երբեք չեն օգտագործվում քվանտորավորված. օրինակ, ոչ ոք չի արտահայտվի՝ «բոլոր Սոկրատները» կամ «որոշ Սոկրատները»։ Նկատի ունենալով այդ քվանտորային արտահայտությունները, Դավիթը նշում է, որ եզակի դատողությունները տարբերվում են մյուս անորոշ դատողություններից, որովհետև նրանց (անորոշ դատողություններին) բնորոշ է որևէ բան ունենալ (տվյալ դեպքում քվանտորային արտահայտություն), բայց տվյալ դեպքում նրանք չունեն այդ, իսկ եզակի դատողություններին քվանտորային արտահայտությունը ո՛չ բնորոշ է, ո՛չ էլ նրանք ունեն այդ (էջ 316)։

Հիշարժան է, որ քննարկվող հարցին Յ. Լուկասևիչը փորձել է տալ այլ բացատրություն։ Նրա կարծիքով եզակի դատողությունները արիստոտելյան սիլլոգիստիկայում բացակայում են այն պատճառով, որ սիլլոգիզմի տեսությունում դատողությունների շրջումը ելակետային սկզբունքի դեր է խաղում, իսկ եզակի դատողությունը, սուբյեկտի բաշխվածության տեսանկյունից համարժեք լինելով ընդհանուր դատողությանը, այնուամենայնիվ ենթակա չէ շրջման[9]։ Այդ տեսակետն, իհարկե, ունի իր հիմքերը, սակայն այն նույնպես չի ընձեռում հարցի համակողմանի բացատրության հնարավորություն։

Այս հարցի քննարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սիլլոգիստիկայի տեսության համար առանցքային դեր է խաղում տերմինների բաշխվածությունը, իսկ դատողության սուբյեկտի բաշխվածությունը որոշվում է նրա քանակով։ Հետևաբար, սիլլոգիզմի տեսության համար անհրաժեշտ և բավարար է դատողությունները բաժանել ըստ քանակի ընդհանուր և մասնավոր դատողությունների։ (Այդ պատճառով էլ սիլլոգիստիկայի շրջանակներում անորոշ դատողությունները Արիստոտելը համարժեք է համարում մասնավոր դատողություններին։ Ի հակադրություն դրան, եզակի դատողությունները, երբ հանդես են գալիս որպես սիլլոգիզմի նախա-

---

9 Я. Лукасевич. Указ. соч., с. 123.

գրքյալ, իրենց դրսևորում են ընդհանուր դատողություններին հավասարազոր, և այդ հանգամանքը լուրջ դժվարություն է Դավիթ Անհաղթի վերը բերված բացատրության համար)։ Իսկ եզակի դատողությունները և՛ իրենց անվանմամբ, և՛ ըստ էության առանձնացվում են այն դեպքում, երբ նկատի է առնվում դատողության սուբյեկտի, որպես հասկացության, տեսակը, այսինքն՝ երբ կիրառվում է դատողության քանակը որոշող բաշխվածությունից լիովին տարբեր մի այլ հիմք։

Որոշ դեպքերում փոխակերպական վերլուծությունը, հարցադրումների պարզաբանումը մտքերի բովանդակության, ենթատեքստի ու համատեքստի միջոցով Դավիթ Անհաղթի համար անհրաժեշտ է լինում։ Այդպիսին է իրավիճակը, օրինակ, դիալեկտիկական և ապացուցական դատողությունների փոխհարաբերության հարցի քննարկման ժամանակ։ Չնայած այսօր այդ հասկացությունները այլևս շրջանառության մեջ չեն գտնվում, այնուամենայնիվ Դավթի մեկնությունը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, իսկ նրա մտքերի ճշգրտությունը և բացատրությունների հստակությունը պարզապես հիացնում են։

Ապացուցական է այն դատողությունը, որը «ճշմարիտ է, թեպետև անհերևակայելի»։ Առաջին հայացքից տրված բնորոշումը տարօրինակ է թվում. ինչպե՞ս կարող է ապացուցված ճշմարտությունը համարվել անհավանական։ Չէ՞ որ ապացուցվածը համարժեք է հավաստի ճշմարտությանը։ Սակայն բավական է ծանոթանալ պարզաբանող օրինակին, որպեսզի ամեն ինչ կարգավորվի. իրոք, երբ ասում են՝ արեգակն անհամեմատ ավելի մեծ է, քան երկիրը, իսկ երկիրը՝ քան լուսինը, թեև արեգակը մեկ ոտնաչափ մեծությամբ է մեզ երևում, ապա, թեև սա «անհերևակայելի է, բայց ճշմարիտ է»։

Նման բնույթի դատողությունները հազվադեպ չեն նաև մեր օրերում։ Որպես կանոն նորագույն գիտական հայտնագործությունները հակասում են մարդկային ողջախոհությանը, «անհերևակայելի» են, չնայած խստորեն ապացուցվում են համապատասխան գիտության շրջանակներում. բավական է վկայակոչել ժամանակի դանդաղման ռելյատիվիստական էֆեկտը, աստղի լույսի ճառագայթի ուղղության շեղումը արեգակի գրավիտացիոն դաշտում, էլեկտրամագնիսական ճառագայթման քվանտային բնույթը և այլն, և այլն։

Տրամաբանության պատմության համար կարևոր նշանակություն ունի հարաբերության մտահանգումների կառուցվածքի Դավիթ Անհաղթի ճշգրտումը։ Ստոիկ տրամաբանները օրինական են համարել հետևյալ կառուցվածքի մտահանգումները. Ա=Բ, իսկ Բ=Գ, ուրեմն Ա=Գ։ Հավասարության հարաբերության փոխանցելիության այս հատկությունն այնքան սովորական է զարգացած մտածողություն ունեցող մարդու համար, որ երևի ոչ ոք չի կասկածի ստոիկյան քննարկվող մտահանգման օրինականությանը։ Սակայն Դավիթը իրավացիորեն ընդգծում է, որ այդ կառուցվածքի մտահանգումներում լռելյայն ենթադրվում է որոշ ընդհանուր սկզբունք, տվյալ դեպքում՝ այն, որ միևնույն բանին հավասարները անհրաժեշտաբար հավասար են իրար։ Իսկ եթե ենթադրվող ընդհանուր սկզբունքը («մեծ նախադրյալը») բացահայտորեն նշվի, ապա կարելի է լրացնել ստոիկյան մտահանգման ոչ լրիվ կառուցվածքը և այն ներկայացնել սիլլոգիզմի օրինական եղանակով։ Փաստորեն Դավիթ Անհաղթը ոչ-բացահայտ ձևով առաջարկում է հետևյալ փոխակերպական կանոնը՝ հարաբերության մտահանգումը հիմնավորելու համար նախ պետք է պարզել, առկա՞ է արդյոք դիտարկվող հարաբերության փոխանցելիությունը արտահայտող ընդհանուր սկզբունք, և եթե այո, ապա այդ սկզբունքը բացահայտ ձևով օգտագործել որպես հիմնավորվող մտահանգման «մեծ նախադրյալ»։

Հարաբերության մտահանգումների հիմնավորման հարցը որոշ դժվարություններ է պարունակում նույնիսկ ժամանակակից տրամաբանության համար։ Նշված պրոբլեմը մասնագետների ուշադրությունը գրավեց դեռևս XIX դարում անգլիացի տրամաբան Ավգուստ Դը Մորգանի աշխատությունների

շնորհիվ, և արդեն դարի վերջին գերմանացի տրամաբան Էռնեստ Շրյոդերին հաջողվեց մշակել հարաբերությունների տեսության առաջին համակարգը դասերի տրամաբանության կոնցեպցիայի շրջանակներում[10]։ Բայց պրոբլեմի լուծումը վերջնական ճանաչում ստացավ մաթեմատիկական տրամաբանության (պրեդիկատների հաշվի) շրջանակներում, որի հիմքը դրեց գերմանացի տրամաբան Գոտլիբ Ֆրեգեն XIX դարի վերջում, իսկ ավարտուն համակարգը ներկայացվեց 1910 թ. Ռասելի և Ուայտհեդի հանրաճանաչ աշխատության մեջ[11]։

Այժմ տարածված է այն կարծիքը, թե իբր արիստոտելյան սիլլոգիստիկայի շրջանակներում հնարավոր չէ հիմնավորել հարաբերության մտահանգումները։ Բայց ինչպես մենք վերը համոզվեցինք, Դավիթ Անհաղթը տալիս է այդպիսի հիմնավորման փայլուն օրինակ։ Նման մոտեցման իրավացիությունը պաշտպանել են մի շարք հայտնի տրամաբաններ՝ անգլիացի Ռ. Ուետլին, ռուս գիտնական Ս. Ի. Պովարնինը, ժամանակակից ամերիկյան տրամաբան Ս. Ֆ. Բարկերը[12]։

Պարզվում է, որ սխալ է նաև այն կարծիքը, թե իբր մաթեմատիկական տրամաբանության շրջանակներում հարաբերության մտահանգումները հնարավոր է հիմնավորել զուտ տրամաբանական միջոցներով, չդիմելով լրացուցիչ ընդհանուր բովանդակային նախադրյալների օգնությանը։ Այդպիսի զուտ ձևական հիմնավորման փորձ կատարել են, օրինակ, Դ. Հիլբերտը և Վ. Ակերմանը[13]։ Բայց վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում ենթատեքստում ենթադրվում և լռելյայն օգտագործվում են այնպիսի պնդումներ, որոնք հավասարազոր են Դավիթ Անհաղթի կողմից օգտագործված ընդհանուր սկզբունքներին[14]։

Արտակարգ փայլով ու նրբությամբ է իրականացնում Դավիթ Անհաղթը փոխակերպական վերլուծությունը դատողությունների շրջման դժվարին դեպքերը պարզաբանելիս։ Ժխտական դատողությունը հակադարձվում է ինքն իր նկատմամբ, իսկ շատ բաներում մենք չենք տեսնում, որ այդ այդպես է։ Իհարկե, ընդհանուր դեպքում դժվար թե որևէ մեկը կասկածի, որ եթե «Ոչ մի Ա Բ չէ», ապա «Ոչ մի Բ Ա չէ»։ Բայց ահա Դավիթը մատնանշում է մի շարք կոնկրետ համատեքստեր, որտեղ ընդհանուր ժխտական դատողության շրջումը հանգեցնում է սխալ եզրակացության։ Օրինակ, եթե ոչ մի դդում դանակ չի կտրում, ապա և ոչ մի դանակ դդում չի կտրում, և եթե ոչ մի պատ ցցի վրա չի գտնվում, ապա և ոչ մի ցից պատի վրա չի գտնվում, և եթե ոչ մի կարաս գինու մեջ չի գտնվում, ապա և ոչ մի գինի կարասի մեջ չի գտնվում (էջ 335)։ Իրենց բացահայտ ձևով այս դատողությունները՝ «ոչ մի» քվանտորային արտահայտության շնորհիվ շատ նման են ընդհանուր ժխտական դատողությանը, սակայն փոխակերպական վերլուծության շնորհիվ դժվար չէ պարզել նրանց ոչ-բացահայտ ձևը՝ «Ոչ մի Ա չի գտնվում Գ հարաբերության մեջ Բ-ի հանդեպ»։ Իսկ դրանք հարաբերության դատողություններ են, որոնք ենթակա են շրջման միայն այն դեպքում, երբ Գ հարաբերությունը սիմետրիկ (համաչափ) է։

Մտահանգման քննարկվող ձևի փոխակերպական վերլուծությունը Դավիթը չի ընդհատում նշված կետում։ Նա շարունակում է հետազոտությունը

---

[10] Տե՛ս E. Schröder. Algebra und Logik der Relative. Leipzig, 1895.

[11] Տե՛ս O. Frege. Begriffsschrift. Halle, 1879; B. Russell, A. H. Whitehead. Principia Mathematica. V. 1, Cambridge, 1910.

[12] Տե՛ս Р. Уэтли. Основания логики. СПб., 1873, с. 42; С. И. Поварнин. Логика отношений. Пб., 1917, с. 79; S. F. Barker. The Elements of Logic. N. Y., 1965, p. 74.

[13] Տե՛ս Д. Гильберт, В. Аккерман. Основы теоретической логики. М.—Л., 1946, с. 89, 135.

[14] Տե՛ս Р. З. Джиджян. Указ. соч., с. 79—84.

և պարզում, որ շրջման դիտարկվող օրինակներում, եթե եզրակացությունները հանգեցնենք համարժեք կատեգորիկ դատողությունների, ապա նրանք կընշեն ճշմարտացի, օրինական։

Իր վերլուծությամբ և հարցի լուծումով Դավիթ Անհաղթը փաստորեն առաջ է քաշում հետևյալ փոխակերպական կանոնը. «Յուրաքանչյուր հարաբերության դատողություն կարելի է շրջել, եթե այն նախօրոք բերվի համարժեք կատեգորիկ դատողության ձևի»։ Հետաքրքիր է, որ XIX դարի անգլիացի տրամաբան Ուիլյամ Ստենլի Ջևոնսը այն միտքն է արտահայտել, որ հավանաբար այդպիսի մոտեցման դեպքում հարաբերության մտահանգումները հնարավոր կլինի հիմնավորել տեղադրման սկզբունքի միջոցով[15], և մեզ իրոք հաջողվեց ապացուցել, որ Ջևոնսի կռահումը ճիշտ էր[16]։

Արտակարգ բարդ են այն դեպքերը, որոնք քննարկվում են ժխտական տերմին (սուբյեկտ) պարունակող ժխտական դատողությունների շրջման կապակցությամբ։ Դավիթ Անհաղթն ապացուցում է, որ նման մտահանգումների տեսությունը մշակելիս պետք է հաշվի առնել, որ տերմինի կրկնակի ժխտումը համարժեք է նրա հաստատմանը. օրինակ, «այն, ինչ ոչ կենդանի էակ չէ, կենդանի էակ է»։

Տրամաբանության պատմության համար չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ կրկնակի ժխտման օրենքը Դավիթ Անհաղթը ոչ թե ենթադրում է, այլ բացահայտորեն ձևակերպում. «Բացասումները, իրար ժխտելով, ստեղծում են մեկ հաստատում» («քանզի ուրացութիւնք զմիմեանս ի բաց բառնալով՝ մի ստորասութիւն առնեն» (էջ 336)։ Իսկ չէ՞ որ նույնիսկ դարեր անց, ձևական տրամաբանության զարգացման պատմության լավագույն էջերից մեկում՝ սխոլաստ տրամաբանության շրջանում կրկնակի ժխտման օրենքը հայտնի էր միայն իր մասնավոր դրսևորումներով[17]։

Ուսանելի է նաև մեր օրերում «ժամանակային տրամաբանության» անվանումը ստացած[18] հարցադրումների փոխակերպական վերլուծությունը Դավիթ Անհաղթի կողմից։ Այսպես, նա քննարկում է մի շարք դատողություններ, որոնց կառուցվածքում էական տեղ են գրավում ժամանակի պահը բացահայտորեն կամ ոչ-բացահայտորեն արտահայտող հասկացությունները. «Ով որ [այժմ] կին է, կույս էր», «Ամեն մի ծերուկ [ժամանակին] մանուկ էր» և այլն։ Եթե այս կառուցվածքը ունեցող դատողությունները շրջելիս անհրաժեշտ զգուշություն չցուցաբերվի, ապա կարելի է ստանալ սխալ եզրակացություններ. «Ով որ կույս է [այժմ], կին էր», «Ով որ [այժմ] մանուկ է, [ժամանակին] ծերուկ էր»։ Դավիթը բացատրում էր, որ սիալն առաջանում է այն պատճառով, որ ստորոգյալը շրջման ժամանակ ճիշտ չի որոշվել։ Ճիշտ շրջման դեպքում դիտարկվող մտահանգումները պետք է կատարվեին հետևյալ ձևով. «Ամեն մի կին [ժամանակին] կույս է եղել, և ով առաջ կույս է եղել, [այժմ] կին է»։ «Ամեն մի ծերուկ [ժամանակին] մանուկ է եղել, և ով որ առաջ մանուկ է եղել, [այժմ] ծերուկ է» (էջ 337)։ Ինչպես տեսնում ենք, ժամանակային տրամաբանության ասպարեզին պատկանող դատողությունների շրջման դեպքում նույնպես Դավիթը դիմում է այն փոխակերպական կանոնին, որի համաձայն ոչ-կատեգորիկ դատողություններից կատարվող մտահանգումների հիմնավորման համար նախադրյալները նախօրոք պետք է բերվեն համարժեք կատեգորիկ դատողության տեսքի։

Փոխակերպական վերլուծության շնորհիվ «Պորփյուրի «Ներածության» վերլուծությունում» որոշակի ճշգրտումներ են կատարվում բաժանման կա-

---

15 Տե՛ս У. С. Джевонс. Основы науки. СПб., 1881, с. 20.

16 Տե՛ս Р. З. Джиджян. Указ. соч., с. 79—84.

17 Տե՛ս Н. И. Стяжкин. Формирование математической логики. М., 1967, с. 156.

18 Տե՛ս, օրինակ՝ А. Т. Ишмуратов. Логические теории временных контекстов. Киев. 1981.

նոններում։ Հաշվի առնելով բաժանման, որպես իմացության միջոցի նպատակը, Դավիթ Անհաղթը կարևոր բացատրություն է տալիս պլատոնյան երրորդ կանոնին, որի համաձայն բաժանումը պետք է կատարել ըստ սուբստանցիալ հատկությունների։ Չէ՞ որ բաժանումը այն բաների, որոնք չեն բացահայտում տվյալ իրի բնությունը, ոչ մի օգտակար արդյունք չի տալիս՝ ո՞չ արվեստ, ո՞չ գիտություն (էջ 149)։ Ահա այս վերջին հանգամանքն է պլատոնյան կանոնի պահանջի ենթատեքստը։

Ընդգծելով բաժանման կարևորությունը, Դավիթ Անհաղթը Պրոմեթևսի մասին հայտնի առասպելում ենթադրում է մի չափազանց անսպասելի ենթատեքստ։ Վկայակոչելով Պլատոնի այն միտքը, որ «բաժանումը պարգևվել է մեզ պրոմեթևսյան հրաշալի կրակի միջոցով», նա այնուհետև պնդում է, որ երբ առասպելաբաններն ասում են, թե Պրոմեթևսը ինչ-որ մի ժամանակ գողացավ կրակն աստվածներից ու պարգևեց մարդկանց, դա այլաբանություն է։ «Քանզի նախ և առաջին Պռիմիթևս եգիտ զբաժանողական հնարս. քանզի բաժանողական հնարն համեմատի հրոյ, և վասն այսորիկ ասեն զնմանէ շընորհել հուր մարդկան» (էջ 39)։

Նշենք նաև, որ Դավիթ Անհաղթի կարծիքը հետազոտության ընթացքում բաժանման և սահմանման հաջորդականության վերաբերյալ միանշանակ չէ։ «Փիլիսոփայության սահմանումները» աշխատության 2-րդ գլխում (պրակում) արտահայտվում և փաստարկվում է այն տեսակետը, որ սահմանումը պետք է նախորդի բաժանմանը։ «Ծու պարտ է գիտել, եթէ պարտ է նախ սահմանել՝ և ապա բաժանել վասն այսր պատճառանաց. քանզի սահմանն վերաբերի միակի, իսկ բաժանումն բազմութեան» (էջ 39)։ Հեղինակը սահմանման և բաժանման փոխհարաբերությունը այս դեպքում հիմնավորում է համանմանության միջոցով։ Իր միտքը ավելի պարզ ու համոզիչ դարձնելու նպատակով նա դիտարկում է հասկացությունների սահմանման և բաժանման կոնկրետ օրինակներ։ «Մարդը կենդանի է, բանական, մահկանացու, մտածելու և գիտություն ընկալելու ընդունակ»։ Պարզ է, մարդու բնությունը բացահայտելուն նպատակաուղղված այս միտքը պատկերում է մի միասնականություն և այդ առումով, իրոք, համապատասխանում է «միակի»։ Մյուս կողմից, բաժանումը մասնատում է միակը բազում տեսակների. գոյացությունը՝ մարմնականի և անմարմնականի, մարմնականը՝ բուսականի և ոչ բուսականի և այլն։ Ընթերցողի համար միանգամայն պարզ է դառնում, որ սահմանումը և բաժանումը փոխաբերվում են ինչպես միակը և բազմությունը։ Սակայն արդյո՞ք դա բավարար հիմք է, որպեսզի հետազոտության ընթացքում սահմանումը նախորդի բաժանմանը։

«Պորփյուրի «Ներածության» վերլուծության» Գ պրակում հակառակ տեսակետի փաստարկումը չափազանց սեղմ է, բայց օժտված է մեծ ապացուցողական ուժով. «Ծու պարտ է գիտել, եթէ նախադասի բաժանականն քան զսահմանականն. վասն զի ամենայն ոք առնելով զպիտանացուն ի բաժանմանէ բացակատարէ զսահմանն» (էջ 114)։

Հետաքրքիր է, որ նման հակասություն կարելի է նկատել նաև Արիստոտելի «Երկրորդ Անալիտիկայում»։ Այստեղ երկրորդ դրքի 5-րդ գլուխը կրում է խմբագիրների կողմից կազմված հետևյալ ենթավերնագիրը. «Բաժանման միջոցով եզրակացություն ու սահմանում ստանալու անհնարինությունը»։ Քանի որ խմբագիրները մասնագետ տրամաբաններ են, պարզ է, որ այդպիսի սկզբունքային ընդհանրացումը որոշակիորեն հենվում է «Անալիտիկաների» տեքստի վրա, չնայած, խիստ ասած, ճիշտ չէ։ Չէ՞ որ Արիստոտելի միտքը էապես տարբերվում է. «սահմանումը (բաժանման միջոցով) սիլլոգիզմ չի կազմում»[19]։ Այսինքն, ոչ թե բաժանման միջոցով սահմանում հնարավոր չէ ստանալ, այլ ուղղակի ստացված սահմանումը չի կարող սիլլոգիզմի դեր կատարել։ Առավել ևս, որ հենց այդ նույն գլխում, մի

19 Երկրորդ Անալիտիկա, II, 5, 92 a 5։

քանի տող առաջ ասված է, որ բաժանման միջոցով կարելի է կազմել սահմանում. «Սակայն նա, ով սահմանում է տալիս բաժանման միջոցով, սիլլոգիզմ նույնպես չի առաջարկում»[20]։ Իսկ նույն գրքի 13-րդ գլխում, որն ամբողջությամբ նվիրված է սահմանումների կառուցման եղանակներին, բացահայտորեն ասվում է, որ հետազոտության ընթացքում նախ պետք է սեռը բաժանել մերձավոր տեսակների և, այնուհետև, հենվելով այդ բաժանման վրա, փորձել տալ նրա սահմանումը[21]։ «Բայց բաժանման միջոցով սահմանումը կառուցելու համար պետք է ձգտել հասնել հետևյալ երեք արդյունքին. բացահայտել այն (հատկությունները), որոնք վերագրվում են (սահմանվող առարկայի) էությանը, կարգավորել այդ հատկությունները, ունենալ բոլոր հատկությունները»[22]։

Արդյունավետ և ուշագրավ է սահմանման կառուցվածքի փոխակերպական վերլուծությունը։ Ընդունելով և պաշտպանելով այն դասական տեսակետը, որ սահմանումը կազմվում է մերձավոր սեռից և տեսակային տարբերությունից («ամեն մի սահմանում գոյանում է սեռից և բաղկացուցիչ տարբերություններից»), Դավիթ Անհաղթը կատարում է բովանդակային բնույթի կարևոր լրացում. սահմանումները կառուցվում են կամ ենթակայի հիմքի վրա, կամ նպատակի, կամ երկուսի, այսինքն ենթակայի և նպատակի. «Եւ պարտ է գիտել, եթէ սահմանք կամ յենթակայէ առնուն և կամ ի կատարմանէ, և կամ յերկոցունց. այսինքն յենթակայէ և ի կատարմանէ» (էջ 46)։ Դավթի տերմինաբանությամբ կառուցել սահմանումը «ըստ ենթակայի» նշանակում է սահմանման մեջ նշել այն օբյեկտը, որի հետ սահմանվողը անմիջական առնչություն ունի, որի շնորհիվ այն «գոյություն ունի և գործում է»։ Աստղագիտության ենթական երկնային մարմիններն են, հյուսնությանը՝ փայտը, փիլիսոփայությանը՝ բոլոր գոյերը, բժշկությանը՝ մարդկային մարմինը։ Իսկ նպատակն այն է, որի համար իրագործվում է ամեն մի սահմանվող օբյեկտ։ Աստղագիտության դեպքում դա երկնային մարմինների շարժումների ճանաչումն է, հյուսնության՝ աթոռ (կամ մի այլ իր) շինելը, փիլիսոփայության՝ գոյերի իմացությունը, բժշկության դեպքում՝ առողջության պահպանումը։

Հայ մեծ մտածողը գտնում է, որ կատարյալ սահմանումները նրանք են, որոնք նշում են սահմանվողի և՛ ենթական, և՛ նպատակը։ Բայց արդյո՞ք բոլոր դեպքերում է հնարավոր նշել նպատակը։ Չէ՞ որ վերոբերյալ բոլոր օրինակներում մենք գործ ունենք մարդկային գործունեության հետ առնչվող հասկացությունների հետ։ Եվ ոմանք ընդհանրապես այն կարծիքի են, որ ենթակայի և նպատակի միջոցով սահմանումը կիրառելի է միայն «արհեստականորեն» ստեղծված իրերի համար։

Հայ տրամաբանը չի խուսափում դժվարության քննարկումից, դիմելով հետևյալ փաստարկին. «Քանզի գտանեմք զսահման և ի վերայ բնականացն յենթակայէ և ի կատարմանէ առեալ, որպէս և ի վերայ բարկութեան, քանզի և բարկութիւն բնական ինչ է. և սակայն յենթակայէ և ի կատարմանէ սահմանեմք զնա, ասելով՝ եթէ բարկութիւն է եռանդն զսրտին արեանն առ ի տենչումն փոխարէն տրտմեցուցանելոյ» (էջ 49)։ Իհարկե, օրինակն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ այն կրկին մարդկային գործունեության (վարքի) հետ է առնչվում։ Եվ ընդհանրապես, եթե հաջողվեր ապացուցել, որ այդպիսի սահմանումներ լինում են, այնուամենայնիվ այն հարցադրումը, թե արդյո՞ք բոլոր սահմանումներն է հնարավոր կառուցել ըստ ենթակայի և նպատակի, կմնար չլուծված։

Ուշագրավ է փիլիսոփայության սահմանումների կատարելության պատճառի բացահայտումը։ Սահմանումների կատարելությունը դրսևորվում է

---

20 Նույն տեղում, 91 b 35։

21 Նույն տեղում, 13, 96 b 15։

22 Նույն տեղում, 97 a 23։

նրանց համաչափության, այսինքն՝ սահմանող և սահմանվող հասկացությունների ծավալների նույնության մեջ, որի պատճառով կատարյալ սահմանումը «դարձունակ» է. եթե Ա հասկացությունը սահմանել ենք Բ-ի միջոցով, տպա կատարյալ սահմանման դեպքում «Բոլոր Ա-երը Բ են» և միաժամանակ «Բոլոր Բ-երը Ա են»։ «Որդոն, յորժամ ասեմք, եթէ զինչ որ միանգամ մարդ է՝ նա կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ, և զինչ որ միանգամ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ, նա մարդ է» (էջ 50)։ Իր հերթին, եթե սահմանումը կառուցվում է միաժամանակ ըստ ենթակայի և ըստ նպատակի, ապա այդ հանգամանքը ապահովում է նրա դարձունակությունը և, հետևաբար, կատարյալ լինելը։ Իսկ փիլիսոփայության սահմանումները, որոնք կազմվում են կամ միայն ըստ ենթակայի, կամ միայն ըստ նպատակի, արդյո՞ք անկատար են։ Պարզվում է, որ ոչ։ Հաշվի առնելով փիլիսոփայության՝ որպես գիտական համակարգի, յուրահատկությունը գիտական գիտելիքի ամբողջական համատեքստում, կարելի է ցույց տալ փիլիսոփայության սահմանումների կատարելությունը. «Վասն զի ենթակայն իմաստասիրութեան, այսինքն ընդհանուր գոյք, ոչ կարող դոն այլ արհեստի ենթակայ լինել, վասն զի ոչ ոք յայլ արհեստից կարող գոյ զընդհանուր գոյս քննել և գիտել. և կատարումն իմաստասիրութեան, այսինքն նմանիլ աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, և ոչ գոյ այլ արհեստի կատարումն, վասն ոչ ինչ կարող գոյ այլ արհեստ նմանեցուցանել զմարդ աստուծոյ ըստ կարողութեան մարդկան» (էջ 51)։

Դավիթ Անհաղթի փոխակերպական վերլուծության հասկացութային համակարգի և հետազոտության եղանակների վրա որոշակի կնիք է թողնում մեկնության առարկա հանդիսացող աշխատությունը։ Այսպես, «Պորփյուրի «Ներածության» վերլուծությունում» դատողությունների սուբյեկտ-պրեդիկատային կառուցվածքի հետազոտությունը տարվում է տերմինների ծավալների փոխհարաբերության տեսանկյունով (էջ 151)։ Իսկ «Արիստոտելի «Անալիտիկաների» մեկնություններում» ո՞չ դատողությունների, և ո՞չ էլ մտահանգումների կառուցվածքի հետազոտության ժամանակ Դավիթը, ակնհայտորեն հետևելով Արիստոտելին, տերմինների ծավալների փոխհարաբերությունը գրեթե չի էլ հիշատակում։

Ընդհանրապես, հայ փիլիսոփան այն կարծիքին է, որ մեկնիչը պետք է մերվի քննարկվող գործին և նրա հեղինակի տեսակետին. «Եւ Արիստոտէլական լինել՝ յորժամ զԱրիստոտէլին պատմէ, եւ ասել՝ եթէ ոչ եղեւ այսպիսի իմաստասէր, եւ Պղատոնական լինել՝ յորժամ զՊղատոն մեկնէ, եւ ասել՝ եթէ ոչ եղեւ որպես Պղատոն իմաստասէր»։ Բայց, իհարկե, մշտապես պետք է ձգտել ճշմարտությանը և հիշել արիստոտելյան թևավոր խոսքը. «Սիրելի այր, սիրելի է եւ ճշմարտութիւն, եւ երկոցուն սիրելեաց ելոց՝ ընտրելի է ճշմարտութիւնն»։ Ըստ որում յուրաքանչյուր հեղինակին պետք է խորապես ուսումնասիրել, անմիջականորեն դիմելով նրա գործերին. «Պարտ է նմա զամենայն զԱրիստոտէլականսն գիտել, որպէս զի ձայնակից իւր արարեալ՝ զԱրիստոտէլ ի ձեռն Արիստոտելի պատմեսցէ» (էջ 215—216)։

Փոխակերպական վերլուծությանը վերաբերող նյութը Դավիթ Անհաղթի ժառանգությունում չափազանց հարուստ է և բազմակողմանի, բայց արդեն վերոշարադրվածն էլ բավարար է, որպեսզի հաստատենք, որ այն կարևոր տեղ է գրավում մեծ փիլիսոփայի ու տրամաբանի մեկնություններում։ Սակայն ի՞նչն է պայմանավորում մեկնությունների անհրաժեշտությունը։ Թերևս, դա առաջին հերթին՝ մեծ հեղինակություններից մեզ հասած գործերում տեղ գտած անպարզություններն են, որոնց պատճառով «եւ է պատմաւդին գործ մեկնութիւն անհաւաստեաց բառից» (էջ 215)։

Այս կապակցությամբ հատուկ քննարկման առարկա է դառնում Արիստոտելի ժառանգությունը, որը հաճախ հարցի լուծումը առաջարկելուց առաջ նախ ձևակերպում է մի շարք դժվարին, առաջին հայացքից՝ անլուծելի

ապորիաներ։ «Եւ այլազգ դարձեալ անհաւաստի է Արիստոտէլ. քանզի տարակուսելով՝ ոչ իսկոյն առընթեր դնէ զլուծումն, այլ շարամանէ զերկրորդ եւ զերրորդ տարակուսութիւնն, եւ այնպես ապա ի ձեռն լուծման յերրորդ տարակուսութեան լուծանէ զառաջին տարակուսութիւնն, զոր ոչ կարէ ի միտ առնուլ ընթերցաւղն» (էջ 217)։

Կարելի է ենթադրել անհավաստության երեք պատճառ՝ կամ որոշ ճըշմարտություններ թաքցնելու նպատակով, կամ ընթերցողին փորձելու, կամ էլ կրթության նպատակով. «Բայց ախորժեաց զանհավաստութիւն վասն երից պատճառաց՝ կամ թագուցանելոյ սակս, կամ փորձելոյ, կամ կրթելոյութեան» (էջ 218)։ Ուշագրավ է, որ «Կատեգորիաների» մեկնությունում, ի տարբերություն իր այլ գործերի, Դավիթ Անհաղթը իր միտքը լուսաբանող օրինակները շատ հաճախ բերում է առասպելներից և պոետական գործերից։ Այսպես, տվյալ երեք պատճառները պարզաբանելիս նա օգտագործում է մոտ 12 օրինակ՝ առասպելներից, ավանդական պատմություններից և պոետական խոսքերից (էջ 218—220)։

Դավիթը համոզված է, որ անստույգ իմացածի, անպարզությունների, անհավաստի ու կասկածելի մտքերի վերլուծության հիմնական եղանակը նըրանց բացատրությունն է հանրահայտի, ստույգ ճանաչվածի միջոցով, «զերկբայացեալն ի մենջ ի խոստովանեցելոցն» (էջ 165)։ Կասկածների և մոլորությունների կոնկրետ պատճառը նա տեսնում է «համանունության», ոչ ճշգրիտ, ոչ միանշանակ տերմինների ու նրանց անզգույշ օգտագործման մեջ, և համանունության հաղթահարման ամենաարդյունավետ եղանակն է համարում «բացորոշման» արիստոտելյան սկզբունքը, որի համաձայն համանունությունը պարզելու համար պետք է դիմել հետևյալ երեք հարցին. քանի՞ նշանակություն ունի քննարկվող հասկացությունը, նշանակություններից որի՞ մասին է այժմ խոսքը, ո՞րն է այդ նշանակության սահմանումը կամ նկարագրությունը (էջ 165)։

Հարցերի հետազոտության եղանակի խստությանը Դավիթ Անհաղթը այնպիսի մեծ կարևորություն է տալիս, որ երբեմն հանդիմանում է նույնիսկ Արիստոտելին, որ նա բավարար չափով հետևողական չէ այս կամ այն հարցը քննարկելիս։ Այսպես, դատողությունների հակադարձության Արիստոտելի ուսմունքի կապակցությամբ Դավիթը գրում է, որ հավաքականությունների (մտահանգումների) մասին եղած ուսմունքից առաջ պետք էր քննել խոսքի (դատողության) հակադարձության հարցը, պարզել, թե քանի՞ իմաստով է ասվում հակադարձության մասին. այն, որի մասին է այժմ խոսքը, քանի՞ իմաստ ունի և ո՞ր նպատակի համար է այն օգտագործվում. տալ այն իմաստի սահմանումը, որի մասին է այժմ խոսքը. ի՞նչ են իրենցից ներկայացնում այն դատողությունները, որոնք բացահայտվում են հակադարձության միջոցով. որո՞նք են այն փիլիսոփաները, որ այս առթիվ տարակուսանք են արտահայտում (էջ 330)։ Արժե նշել, որ Արիստոտելի հասցեին ուղղված հանդիմանությունները միշտ չէ, որ արդարացված են։ Այսպես, Արիստոտելը չէր կարող բավարարել վերջին կետի պահանջը, քանի որ, ինչպես նա մի քանի անգամ ընդգծել է, մտահանգման տեսությունը մշակելիս նա նախորդներ չի ունեցել. «Ինչ վերաբերում է մտահանգման ուսմունքին, ապա մենք չգտանք ոչ մի այնպիսի բան, որ ասված լիներ մեզանից առաջ և ստիպված էինք ինքներս այն ստեղծել ժամանակի և ուժի մեծ ծախսերով»[23]։

Ով բոլոր դեպքերում Դավիթ Անհաղթը բոլոր լուծումները, նրանց ճշգրտումները պարզաբանում և բացատրում է դիպուկ, մատչելի օրինակներով։ Փաստարկման և փոխակերպական վերլուծության այս կարևոր միջոցը հայ փիլիսոփայի գործերում ոչ միայն կիրառվում է լայնորեն, այլ նաև ձևակերպվում բացահայտորեն որպես ընդհանուր պահանջ։ «Այլ զի հաւաստի մեզ վարդապետութիւնս եղիցի,— գրում է Դավիթ Անհաղթը սահմանման հարցի

23 Սոփեստական հերքումների մասին, 184 b 1։

կապակցությամբ,— յորինակ առնումք զսահմանն մարգոյ» (էջ 40)։ Նշենք, որ նման միտք է արտահայտել փաստարկման տեսության կապակցությամբ նաև Արիստոտելը. «Պարզության համար պետք է բերել օրինակներ և համեմատություններ։ Օրինակները պետք է լինեն նպատակահարմար և վերցվեն լավ ծանոթ նյութից, ինչպես դա տեղի ունի Հոմերոսի մոտ, այլ ոչ թե Խերիլի։ Որովհետև այդ եղանակով է ավելի պարզ դառնում առաջ քաշված թեզիսը»[24]։

Նշենք նաև, որ փոխակերպական տրամտրտնության տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում դիտական երկերի նյութի և ձևի Դավիթ Անհաղթի բնութագիրը։ «Բայց տարբերին և ճանաչին շարագրածք՝ թէ խորթք իցեն, թէ հարազատք, ըստ նիւթոյն և ըստ տեսակին։ Ըստ նիւթոյն՝ ըստ յարմարման և ըստ բառից. զի յարմարումն և բառք որպէս նիւթ են շարադրութեան։ Իսկ ըստ տեսակի՝ ըստ մտածութեան» (էջ 109)։ Բայց ինչպե՞ս որոշել հեղինակի մտածելակերպը և, ընդհանրապես, ո՞րն է մտածելակերպի էությունը։ Հարց, որին այսօր էլ մենք չենք կարող համոզիչ և բոլորի համար ընդունելի պատասխան տալ։

Փոխակերպական տրամաբանությունն ուղղված է զևպի ապագան, դեպի տրամաբանական կնճռոտ ու դժվարին հարցերի լուծման կանոնների համակարգի ստեղծումը։ Եվ այդ կարևոր նպատակի իրագործման գործում մեծ դեր կարող է խաղալ տրամաբանության պատմության ուսումնասիրությունը, հատկապես Դավիթ Անհաղթի արամաբանական ժառանգության, նրա դաղափարները ու մոտեցումների հետազոտությունը։

## ЭЛЕМЕНТЫ ТРАНСФОРМАЦИОННОЙ ЛОГИКИ В ТРУДАХ ДАВИДА АНАХТА

*Доктор филос. наук Р. З. ДЖИДЖЯН*

**Резюме**

Давид Анахт при разрешении трудных проблем логики, многие из которых не потеряли своего значения и в наши дни, успешно использует обращение к подтексту и контексту рассуждения—основному средству анализа в рамках трансформационной логики, разрабатываемой в последние годы в работах академика Г. А. Брутяна. Исследования армянского мыслителя древности позволяют сформулировать трансформационные правила, представляющие несомненный интерес с точки зрения дальнейшего развития самой трансформационной логики. Особенно значительными представляются трансформационные по своему существу правила Давида Анахта, касающиеся проблем уточнения значения понятий, видов и форм суждений, обращения суждений с отрицательными терминами, умозаключений из суждений с отношениями, теории деления и определения.

24 *Տիպիկա, VIII 2, 157 a 14։*